ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2020 թվականի թիվ 307 - Ա

ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՎ ԱՆՑՆՈՂ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

որոշում եմ

1.Ստեղծել մարզի տարածքով անցնող հանրապետական և միջպետական ավտոճանապարհների հատվածներում մշտադիտարկում իրականացնող աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Աղաբեկ Գալստյան – խմբի ղեկավար, ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ

անդամներ

Արտակ Սարգսյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ

Ռուբեն Պետրոսյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի ավագ մասնագետ

Կարեն Օթարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի ավագ մասնագետ

Արկադի Ամիրխանյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի ավագ մասնագետ

Վահե Հովհաննիսյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ

Խաչիկ Ամիրաղյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության

հարցերի բաժնի գլխավոր մասնագետ

2. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) համայնքներում ձևավորել համապատասխան աշխատանքային խմբեր,

2) ձեռնարկել կանխարգելիչ միջոցներ հետագայում իրավախախտման դեպքերը բացառելու նպատակով,

3) իրականացված աշխատանքների վերաբերյալ մարզպետարան ներկայացնել տեղեկատվություն յուրաքանչյուր ուրբաթ:

3. Աշխատանքային խմբի ղեկավարին՝

1) համագործակցել համայնքների համապատասխան աշխատանքային խմբերի հետ,

2) մարզի տարածքով անցնող հանրապետական և միջպետական ավտոճանապարհների հատվածներում պարբերաբար իրականացնել մշտադիտարկման աշխատանքներ,

3) արդյունքում հայտնաբերված իրավախախտումների, այդ թվում նաև արգելված տեղերում անասուններ պահելու դեպքերով տեղեկատվություն ներկայացնել համայնքների ղեկավարներին «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի համապատասխան հոդվածներով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու, ինչպես նաև հետագայում նման դեպքերը կանխարգելելու նպատակով,

4) ամփոփել համայնքների կողմից ներկայացված տեղեկատվությունը և ներկայացնել մարզպետին:

4. ՀՀ Տավուշի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Վալեր Օրդյանին՝ իրականացված աշխատանքները լուսաբանել մարզպետարանի պաշտոնական կայքի և ֆեյսբուքյան էջի միջոցով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

21.08.2020

X

2020թ. օգոստոսի 21
ք.Իջևան